ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/2-Խ-2

ք. Երևան «04» մարտի 2026թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանուկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մարտուն Համլետի Ասատրյանը, (Ծնված 13.01.1991թ., նույնականացման քարտի համարը 015424641 տրված 29.01.2024թ., 006-ի կողմից հանրային ծառայությունների համարանիշը 2301910075 (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE) բնապահպանության մասնագետի՝ խորհրդատվության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8,670,000 (ութ միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ: Կատարողի մատուցման ենթակա ծառայության դիմաց վճարման ամսական հավասար համամասնությունը կազմում է 867,000 (ութ հարյուր վեթսունյոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է __11__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	Մարտուն Ասատրյան
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Հասցե՝ 0063, ք. Երևան, Խուդյակով 84/3
ՖՆ գործառնական վարչություն	շ, բն59
Հ/Հ 900011040467	նույնականացման քարտի համարը
ՀՎՀՀ 02555816	015424641 տրված 29.01.2024թ., 006-ի
գլխավոր քարտուղար	կողմից հանրային ծառայությունների
scws@scws.am	համարանիշը 2301910075
_____ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ	Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ
(ստորագրություն)	Հ/Հ 1570018765700300
Կ. Տ.	Հեռ. +374 93 355 821
	էլ. հասցե asatryan.1991@inbox.ru
	_____ Մ. ԱՍԱՏՐՅԱՆ
	(ստորագրություն)

Հավելված N 1
«04» մարտի 2026թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/2-Խ-2 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը*
85311210/27	խորհրդատվության ծառայություններ	*կարդալ ստորև	դրամ	8,670,000	1	Ծառայությունները մատուցվում են Ջրային կոմիտեում՝ Վարդանանց 13ա կամ Վարդանանց փակուղի 8 հասցեներում	Ծառայությունները մատուցվելու են «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE) շրջանակում, ոչ ուշ քան 30.12.2026թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 26-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE)»

Չափաբաժին 3
«Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» Ծրագրի Բնապահպանության մասնագետի խորհրդատվական ծառայություններ
Ծառայության նկարագիրը

Ծրագրի իրականացման մարմինը

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Ջրային կոմիտե (ՋԿ)

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) Համաշխարհային բանկի (ՀԲ), Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագիրը: Ծրագրի զարգացման նպատակն է (ԾԶՆ) ապահովել բարելավված ոռոգման ծառայությունների և անվտանգ կառավարվող գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման (Գ-ՋևՋ) ծառայությունների հասանելիությունը Հայաստանի ընտրված տարածքներում, մինչդեռ ՋՈԾԲ ծրագրի առաջին փուլի զարգացման նպատակն է ապահովել արդյունավետ ու ֆինանսապես կայուն ոռոգման և անվտանգ կառավարվող գյուղական ջրամատակարարման ծառայությունների բարելավված հասանելիությունը Հայաստանի ընտրված տարածքներում: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի ջրային ռեսուրսների անվտանգ կառավարման մակարդակը՝ հետևյալ հիմնական ուղղություններով. ա) ընտրված ոռոգման համակարգերի արդիականացում, բ) ընտրված գյուղական համայնքներում և մարզերում ջրամատակարարման բարելավում, և գ) ջրային ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ, ֆինանսական և բնապահպանական կայունության ամրապնդում:

ՋՈԾԲ ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Ջրային ոլորտի բարեփոխումներ և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

Ենթաբաղադրիչ 1.1. Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության և պլանավորման ամրապնդում
Ենթաբաղադրիչ 1.2. Ոռոգման ոլորտի կառավարման և ծառայությունների մատուցման բարելավում
Բաղադրիչ 2. Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում
Ենթաբաղադրիչ 2.1. Ինստիտուցիոնալ ամրապնդում, կարողությունների զարգացում և կարգավորող բարեփոխումներ
Ենթաբաղադրիչ 2.2. Տեխնիկատնտեսական հիմնավորումներ և ենթակառուցվածքների ներդրումներ
Բաղադրիչ 3. Ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացում
Ենթաբաղադրիչ 3.1. Կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայուն ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում և համակարգի կառավարում
Ենթաբաղադրիչ 3.2. Վերահսկիչ կառավարման և տվյալների հավաքագրման (SCADA) համակարգի ներդրում
Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

ՏԿԵՆ ՋԿ Ծրագրի իրականացման թիմը (ԾԻԹ) պատասխանատու է Ծրագրի ամենօրյա կառավարման համար և ապահովում է ազգային օրենսդրության և ՀԲ-ի Բնապահպանական և սոցիալական շրջանակի (ԲՍՇ) պահանջների համապատասխանությունը, որոնք մանրամասնորեն սահմանված են Ծրագրի Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում (ԲՍՀՊ):
Բնապահպանության մասնագետը պատասխանատու կլինի շրջակա միջավայրի ռիսկերի և ազդեցությունների կառավարման համար, ներառյալ ենթածրագրերի շրջանակներում բնապահպանական ազդեցության գնահատման և համապատասխան գործիքների մշակման, վերահսկման, կարողությունների զարգացման և ընդհանուր հաշվետվությունների պատրաստման աշխատանքները: **Բնապահպանության մասնագետը** տեխնիկական աջակցություն կտրամադրի ԾԻԹ-ին՝ ապահովելու Ծրագրի ԲՍՀՊ-ի, Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակի (ԲՍԿՇ) և տեղանքին բնորոշ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանների (ԲՍԿՊ) ամբողջական կատարումը՝ միաժամանակ Ծրագրին ինտեգրելով ՀԲ կիրառելի Բնապահպանական և սոցիալական ստանդարտների (ԲՍՍ) պահանջները:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՋՈԾԲ Ծրագրի Բնապահպանության մասնագետի պարտականությունները ներառում են հետևյալը.

1. Ապահովել, որպեսզի Ծրագրի բոլոր գործողությունները համապատասխանեն ՀԲ ԲՍՇ-ին, շրջակա միջավայրի վերաբերյալ ազգային օրենսդրությանը և ԲՍՀՊ-ին:
2. Կատարել նախնական տեղամասային այցեր և գործունեության տարածքների շրջակա միջավայրի ռիսկերի և ազդեցությունների նախնական զննումներ, ինչպես նաև համագործակցելով սոցիալական մասնագետի հետ՝ պատրաստել ենթածրագրերի մակարդակով Բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) ռիսկերի զննման հաշվետվություններ:
3. Ղեկավարել կամ աջակցել ենթածրագրերի մակարդակով ԲևՍ գործիքների պատրաստման, վերանայման և հաստատման գործընթացը, ներառյալ՝
   ա. Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների գնահատումներ (ՇՄՍԱԳ-ներ),
   բ. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ (ԲՍԿՊ-ներ),
   գ. Կապալառուի Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ (Կ-ԲՍԿՊ-ներ),
   դ. Բնապահպանական և սոցիալական գործելակերպերի կոդեքսներ (ԲՍԳԿ-ներ),
   ե. ԲՍԿՇ, ԲՍՀՊ կամ այլ ԲևՍ գործիքների թարմացումներ՝ անհրաժեշտության դեպքում կամ անսպասելի հանգամանքներում՝ ՀԲ-ի ԲՍՇ-ի հարմարվողական կառավարման սկզբունքին համահունչ,
զ. Ռազմավարական էկոլոգիական և սոցիալական գնահատման (ՌԷՍԳ) տեխնիկական առաջադրանքի պայմանների (ԱՊ) մշակում՝ կարգավորող բարեփոխումներին և ազգային ռազմավարություններին համապատասխանեցման, ինչպես նաև հետագա ԲևՍ ռիսկերի և ԲՍՍ պահանջների կառավարման նպատակով:
4. Վերջնականացնել ԲՍԿՇ-ի նախնական տարբերակը՝ ներառելով հանրային քննարկումների ընթացքում ստացված դիտարկումները, կատարելով անհրաժեշտ փոփոխությունները և ապահովելով դրա վերահրապարակումը:
5. Սերտորեն համագործակցել նախագծային կապալառուների, ինժեներների և գնումների մասնագետի հետ՝ բնապահպանական ռիսկերի գնահատման և կառավարման հարցերում, անհրաժեշտության դեպքում, տրամադրել բնապահպանական դիտարկումներ նախագծերին, ինչպես նաև ապահովել ԲևՍ պահանջների ներառումը մրցութային փաստաթղթերում և պայմանագրերում՝ ԲՍՍ-ների/ԲՍՀՊ-ի պահանջներին համապատասխան:
6. Համագործակցելով սոցիալական մասնագետի և Առողջության և աշխատանքի անվտանգության (ԱԱԱ) մասնագետի հետ՝ ապահովել համապատասխան ԲՍՍ-ների իրականացումը, մասնավորապես՝
   ա. ԲՍՍ1. Բնապահպանական և սոցիալական ռիսկերի ու ազդեցությունների գնահատում և կառավարում,
   բ. ԲՍՍ2. Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարում՝ կենտրոնանալով ԱԱԱ ոլորտների և

ԲևՍ գործիքներում դրանց ներռման վրա,
գ. ԲՍՍ3. Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում և կառավարում,
դ. ԲՍՍ4. Համայնքի առողջություն և անվտանգություն՝ կենտրոնանալով տրանսպորտային և ճանապարհային անվտանգությանն, ինչպես նաև պատվարների անվտանգության հարցերին,
ե. ԲՍՍ6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական պաշարների կայուն կառավարում,
զ. ԲՍՍ8. Մշակութային ժառանգություն,
է. ԲՍՍ10. Շահակիրների ներգրավում և տեղեկատվության հանրայնացում՝՝ կենտրոնանալով բնապահպանական ռիսկերի կառավարման, հաղորդակցության ու թափանցիկության հարցերի վրա:

7. Կատարել կապալառուների բնապահպանական գործունեության համապատասխանության մշտադիտարկում ԲՍԿՊ-ների և Կ-ԲՍԿՊ-ների պահանջներին՝ տեղամասերի կանոնավոր դիտազննմամբ, վերանայել կապալառուների կողմից ներկայացվող ամսական մշտադիտարկման հաշվետվությունները և ապահովել հետադարձ կապ՝ Ծրագրի ԲՍԿՇ-ին համապատասխան:
8. Վերանայել և հաստատել կապալառուների բնապահպանական կառավարման համակարգերը՝ աշխատանքների մեկնարկից առաջ:
9. Հայտնաբերել, փաստաթղթավորել, պատրաստել և հետևել չհամապատասխանության դեպքերին, ինչպես նաև առաջարկել ուղղիչ գործողություններ:
10. Ստեղծել բնապահպանական մշտադիտարկման համակարգ՝ ներառելով ցուցանիշներ և հաշվետվությունների ձևաչափեր՝ ԲՍՀՊ պարտավորություններին և ԲՍԿՇ ուղեցույցներին համապատասխան:
11. Պատրաստել և իրականացնել կարողությունների զարգացման ծրագիր (ԿԶԾ)՝ ԾԻԹ-ի աշխատակիցների, կապալառուների և տեղական իշխանությունների համար՝ ԲՍՍ-ների և ԲՍՇ-ի պահանջների վերաբերյալ:
12. Կազմակերպել ուսուցումներ ծրագրի հիմնական ԲևՍ դրույթների շուրջ՝ ներառյալ ծրագրային և ենթածրագրային մակարդակի ԲևՍ գործիքները՝ ԲՍՀՊ-ի պահանջներին համահունչ:
13. Աջակցել սոցիալական մասնագետին՝ միացյալ (կումուլատիվ) ԲևՍ ռիսկերի վերլուծության և կառավարման գործում:
14. Համագործակցել ԱԱԱ մասնագետի հետ՝ ապահովելու, որ աշխատանքի անվտանգության դրույթները պատշաճ կերպով ներառվեն ԲևՍ գործիքներում:
15. Մասնակցել շահակիրների ներգրավման միջոցառումներին՝ ապահովելով, որ բնապահպանական հարցերը հստակ ներկայացվեն ազդակիր համայնքներին և այլ շահակիրներին:
16. Ստեղծել և պահպանել բնապահպանական միջադեպերի և վթարների հաշվառման և զեկուցման համակարգ:
17. Անմիջապես տեղեկացնել ՋԿ/ԾԻԹ-ին և ՀԲ-ին Ծրագրին առնչվող ցանկացած միջադեպի կամ վթարի մասին, որն ունի կամ կարող է ունենալ լուրջ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի, աշխատողների, մշակութային ժառանգության կամ կենսաբազմազանության վրա, ինչպես նաև առաջացնում է շրջակա միջավայրի աղտոտում կամ պատվարի վթար՝ ԲՍՀՊ-ի պահանջներին և ՀԲ-ի միջադեպերի զեկուցման ուղեցույցներին համապատասխան:
18. Ղեկավարել կամ աջակցել միջադեպերի հետաքննությանը՝ պատրաստելով WB-ի պահանջած հաշվետվություններ/ձևաթղթեր, ինչպես նաև ուղղիչ գործողությունների պլանների (ՈՒԳՊ) մշակում և իրականացում:
19. Մասնակցել եռամսյակային ԲևՍ կատարման մշտադիտարկման հաշվետվությունների պատրաստմանը՝ ՋԿ/ՏԿԵՆ/ԾԿԽ-ի և ՀԲ-ի համար՝ ԲՍՀՊ և ԲՍԿՇ պահանջներին համապատասխան, ներառյալ տեղամասային այցերն՝ ըստ մշտադիտարկման պլանի:
20. Ներդրում ունենալ կիսամյակային առաջընթացի հաշվետվությունների ԲևՍ համապատասխանության բաժինների պատրաստման գործում:
21. Բացի վերը նշված պարտավորությունները **ՋՈԾԲ Ծրագրի Բնապահպանության մասնագետը** պարտավոր է Ջրային կոմիտեի նախագահի և/կամ նրա հանձնարարությամբ կամ հրամանով համապատասխան ոլորտ(ներ)ը համակարգող Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ(ների) հանձնարարությամբ անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրել Ջրային կոմիտեի կողմից տարեկան բյուջետային ծրագրերի շրջանակներում կամ միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում ջրային համակարգերի/հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախագծման և կառուցման (վերակառուցման, հիմնանորոգման, վերականգնման, վերազինման, վերանորոգման) փուլերում գտնվող ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր), ինչպես նաև նոր մշակվող ծրագրերի պլանավորման և իրականացման հարցերում

3. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

1. Բարձրագույն կրթություն՝ շրջակա միջավայրի գիտության, բնապահպանական ճարտարագիտության, բնապահպանության, բնական պաշարների կառավարման, իրավագիտության կամ հարակից ոլորտում:
2. Առնվազն 10 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ շրջակա միջավայրի ռիսկերի գնահատման

ու կառավարման ոլորտում, որից առնվազն 3 տարին՝ Համաշխարհային բանկի (կամ նման միջազգային ֆինանսական հաստատությունների) կողմից ֆինանսավորվող ենթակառուցվածքային ծրագրերում:

3. ՀԲ-ի կամ այլ ՄՖՀ (օրինակ՝ ԱԶԲ, ՎԶԵԲ) ԲՍՇ և ԲՍՍ1-ԲՍՍ10 կամ բնապահպանական ստանդարտների պահանջների խորը իմացությունը կդիտվի որպես առավելություն:
4. Գործնական փորձ ՇՄՍԱԳ-ի կամ ԲՍԿՊ-ի և Կապալառուի ԲՍԿՊ-ների պատրաստման և իրականացման գործում:
5. Բնապահպանական թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի և ազգային օրենսդրության իմացություն:
6. Խորհրդատուների և կապալառուների աշխատանքների վերահսկման փորձառություն:
7. Վարժ հաղորդակցման, բանակցային և հաշվետվությունների կազմման հմտություններ՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

4. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՋՈԾԲ Ծրագրի Բնապահպանության մասնագետի ծառայությունները ձեռք են բերվում խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում՝ առաջադրանքի իրականացման համար սահմանված ժամկետի համաձայն: Ծառայություններ մատուցվում են ամբողջական աշխատանքային գրաֆիկով, Երևանում: Անհրաժեշտության դեպքում, կիրականացվեն գործուղումներ դեպի ծրագրի տարածք:

ՋՈԾԲ Ծրագրի Բնապահպանության մասնագետը հաշվետու է ՋՈԾԲ Ծրագրի ղեկավարին/ ՋՈԾԲ Ղեկավարի տեղակալին:

Աշխատանքները կիրականացվեն.	
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:	մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և դրանով նախատեսված վարկային միջոցներից Ծրագրի անձնակազմի վճարման գործընթացների մշակումը և մեկնարկը, սակայն ոչ ուշ քան 30.12.2026թ.
Ֆինանսավորման աղբյուր	
ՀՀ պետական բյուջե՝ մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և դրանով նախատեսված վարկային միջոցներից Ծրագրի անձնակազմի վճարման գործընթացների մշակումը և մեկնարկը	
Ամսական հավասար համամասնությամբ (սահմանվում է յուրաքանչյուր ամսվա համար 867,000 ՀՀ դրամ)	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am

Ա. ՄԱԼՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Մարտուն Ասատրյան
Հասցե՝ 0063, ք. Երևան, Խուդյակով 84/3 շ, 59բն,
նույնականացման քարտի համարը 015424641 տրված 29.01.2024թ., 006-ի կողմից հանրային ծառայությունների համարանիշը 2301910075
Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570018765700300
Հեռ. +374 93 355 821
Էլ. հասցե asatryan.1991@inbox.ru

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված N 2
«04» Դեկտեմբեր 2026թ. կնքված
***ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/2-Խ -2** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	85311210/27	խորհրդատվության ծառայություններ	867,000	1,734,000	2,601,000	3,468,000	4,335,000	5,202,000	6,069,000	6,936,000	7,803,000	8,670,000	8,670,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am

_____ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Մարտուն Ասատրյան
Հասցե՝ 0063, ք. Երևան, Խուդյակով 84/3 շ, 59բն,
նույնականացման քարտի համարը 015424641 տրված 29.01.202թ., 006-ի կողմից հանրային ծառայությունների համարանիշը 2301910075
Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570018765700300
Հեռ. +374 93 355 821
Էլ. հասցե asatryan.1991@inbox.ru

---------- Մ. ԱՍԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 3
«04» Մարտի 2026թ. կնքված
***ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/2-Խ-2** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2026թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2026թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2026թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«04» մարտի 2026թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԾՁԲ-26/2-Խ-2 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2026թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2026թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն